

---

---

## ԱՐՄԵՆ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Փետրվարի 19-ին ծանր հիվանդությունից հետո կյանքից հեռացավ հայ մշակույթին ողջ էությունը զինվորագրված, եզակի նվիրյալ, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հասարակական կազմակերպության հիմնադիր-նախագահ, ճարտարապետության դոկտոր Արմեն Հովհաննեսի Հախնազարյանը:



Ծնվել է 1941 թ. մայիսի 5-ին Թեհրանում: Տարական և միջնակարգ կրթությունը ստացել է Քուշեշ Դավթյանի անվան դպրոցում և ավարտել 1959 թ.: Գերմանիայի Աախեն քաղաքի համալսարանում ուսանել է ճարտարապետություն և քաղաքաշինություն:

1968 թ. շուրջ 6 ամիս զբաղվել է Պարսկաստանի Ատրպատական նահանգում (պատմական Արտազ գավառ) գտնվող հայկական վանքերի ու եկեղեցիների, մասնավորապես Սբ. Թադեոս առաքյալի, Ծործորի Սբ. Աստվածածին և Դարաշամբի Սբ. Ստեփանոս նախավկա վանքերի ուսումնասիրությամբ ու չափագրությամբ: Ընդ որում, Սբ. Թադեոս առաքյալի վանքի ուսումնասիրությունը հիմք է ծառայել ճարտարապետության դոկտորական թեզի համար:

1972–1978 թթ. Գերմանիայից կազմակերպել է Արևմտյան Հայաստան և Կիլիկիա գիտարշավներ, որոնց արդյունքը հիմք է ծառայել «Հայկական ճարտարապետության» 7 հատորանոց միկրոֆիլմերի հրատարակությանը պրոֆ. Վազգեն Բարսեղյանի (ԱՄՆ) մեկենասությամբ:

Շարունակական աշխատանքը, որի նպատակն էր գիտարշավների միջոցով պատմական Հայաստանի տարածքում (ներառյալ Փոքր Հայքն ու Կիլիկիան, նաև Սփյուռքը) գտնել, ուսումնասիրել և հանրությանը ներկայացնել հայկական պատմամշակութային արժեքները, հիմնաքարն է դարձել «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» (Research on Armenian Architecture RAA) հասարակական կազմակերպության ստեղծման համար (1978 թ.):

1982–1985 թթ. ղեկավարել է Թեհրանի Սբ. Գևորգ, Սբ. Գրիգոր և Վանաքի եկեղեցիների վերականգնման աշխատանքները:

1996–1997 թթ. մասնակցել է Սիրիայի Քեսաբ քաղաքի երկու եկեղեցիների և բնակելի երկու շենքերի վերականգնմանը:

1998 թ. «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» կազմակերպությունը պաշտոնականացել է Երևանում, և 2000 թ. փետրվարից գրասենյակ

կը գործում է Բաղրամյան 24գ հասցեում: Ունի նաև իր մասնաճյուղերն Աախենում, Լոս Անջելեսում և գործընկերներ տարբեր երկրներում:

Շուրջ 25 տարի եղել է «Երկիր և մշակույթ» հասարակական կազմակերպության վարչության կազմում:

Հայաստանում մասնակցել է մի քանի վանքերի ու եկեղեցիների՝ Տաթև գյուղի Մբ. Մինաս եկեղեցու, Ապարանի Մբ. Խաչ եկեղեցու, Սաղմոսավանքի, Ուշի գյուղի Մբ. Սարգիս վանքում դամբարան-մատուռի, Արցախի Քարինտակ գյուղի եկեղեցու և նշանավոր Դադիվանքի վերականգնման աշխատանքներին, դեկավարել դրանք:

Հեղինակել է հայկական ճարտարապետությանը նվիրված աշխատություններ՝ *Nor Djulfa. Documents of Armenian Architecture* և *St. Thaddaeus Monastery. Documents of Armenian Architecture*: Հեղինակել է նաև մի շարք հոդվածներ, մասնակցել բազմաթիվ գիտաժողովների և բազմաթիվ երկրներում զեկույցներով ու ցուցահանդեսներով ներկայացրել հայկական ճարտարապետությունը:

«ԱԶԳ», 20. 02. 2009 Թ.